

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2023 թվականի հունիսի 8-ի N922-Ն որոշման մեջ
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության կառավարության որոշման
նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

..... 2024 թվականի N - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
8-Ի N922-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ
հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը
որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի
հունիսի 8-ի «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական
անձանց հարկային մարմնում հաշվառման պարզեցված կարգը
սահմանելու մասին» N922-Ն որոշման 1-ին կետով սահմանված
հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է 2025 թվականի փետրվարի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2024 թվականի

_____ -ի N _____-Ն որոշման

«Հավելված

ՀՀ կառավարության 2023 թվականի

հունիսի 8-ի N 922-Ն որոշման

Պ Ա Ր Զ Ե Ց Վ Ա Ճ Կ Ա Ր Գ

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԶՀԱՆՂԻՍԱԳՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց՝ հարկային մարմնում պարզեցված հաշվառման կանգնելու հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգը վերաբերում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձանց, որոնք «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան համարվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:
3. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային մարմնում պարզեցված հաշվառման համար անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ մուտք գործելուց նույնականացման արդյունքում հարկային մարմնի տեղեկատվական համակարգը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին ինքնաշխատ շնորհում է հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ), բացառությամբ սույն կարգի 5-րդ կետում նշված դեպքի:
4. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի՝ ՀՎՀՀ ունենալու դեպքում անձնական գրասենյակ էջում ցուցադրվում է ֆիզիկական անձի ՀՎՀՀ-ն:
5. Էլեկտրոնային հարթակների միջոցով ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման դեպքում ուղևորափոխադրման ծառայություն մատուցող ֆիզիկական անձինք հաշվառվում են հարկային մարմնում՝ Էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող անձանց կողմից հարկային մարմին ֆիզիկական անձանց վերաբերյալ ներկայացված հետևյալ տեղեկատվության հիման վրա՝ անուն, ազգանուն, անձնագիր կամ նույնականացման քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ լիազոր մարմնի տրամադրած տեղեկանք: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի ՀՎՀՀ-ն հարկային մարմնի տեղեկատվական համակարգը շնորհում է տեղեկությունը հարկային մարմին ստացվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:»: